Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20532

1886

2 010

2002

ԿԱՆՈՆՔ

ԸՍԿԵՐՏՑԱՑ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱՑ

ԾԵՊԱՔԱՆՉՔ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՎԵՂԱՐՇԱՊԱՏ

ԵՊԻՍԿ. ԷՋՄԻԱԾՆԻ

1886

373
7-47

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ՄԱՏԱԷՔԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։

ՀԱՅ Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ

~~370~~
~~370-ԿԱ~~ ԿԱԿՈՆՔ
370 ԸՆԼԿԵՐՑԱՑ ԵՒ ՈՒՍԱՆՈՂԱՑ
Հ007-ԿԱ ՃԵՄԱՐԱՆՔ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

1004
1592

—o—

1· Ճաշակերտելոցն պահանջի անպայման հնազանդութիւն հրամանաց և կարգադրութեանց Տեսչի և այլոց պաշտօնէից, նաև անվթար պահպանութիւն ամենայն կանոնաց սահմանելոց վասն ինքեանց։

2· Աշակերտեալք պարտին ամենայն ճշտութեամբ պահպանել զկանոնս պարկեշտութեան ի վարս, ի խօսս և ի գրութիւնս իւրեանց։

3. Աշակերտեալք թէ ի յաճախելն յեկեղեցի, թէ ի ժամ առաւօտեան և երեկոյեան աղօթից և թէ յամենայն դէպս, յորժամ խմբին ի սրահի կամ ի հանդիսարանի, պարտին պահպանել լռութիւն։

4. Ամենայն աշակերտեալք առանց զանցառութեան զոյգ զոյգ պարտին գնալ յեկեղեցի ի կիւրակամուտս, ի կիւրակէս, ի Նախատօնակս և յառաւօտու տօն աւուրց և ի ժամ Ս. Պատարագի, և կանգնելով ի նշանակեալ տեղւոջ, երկիւղածութեամբ ունկնդիր լինելոց են բովանդակ ժամասացութեան։ Մինչ ցաւարտ ժամասացութեան ոչ ոք ունի իրաւունս արտաքս ելանելոյ, բաց ի կարեւոր և ի ստիպողական հանգամանաց, և այն ևս լինելոց է գիտութեամբ և թոյլտուութեամբ օրապահ վերակացուի։

5. Որք երգեցիկքն են, ըստ կարգա-

դրութեան ուսուցչի երգեցողութեան պարտին ասել փոխ և առնել դպրութիւն։

6. Ի լուր աւուրս՝ վասն սպասաւորութեան եկեղեցւոյ, ըստ կարգադրութեան ուսուցչի երգեցողութեան՝ նշանակին հերթակալք յամենայն աշակերտելոց և ոչ ոք ունի իրաւունս զանց առնել զայսու պարտաւորութեամբ։

7. Աշակերտեալք ամենայն խոստովանին և հաղորդին երիցս ի տարւոջ, այն է՝ ի տօնի Աստուածայայտնութեան, ի տօնի Զատկի և ի տօնի Վերափոխման Ս. Աստուածածնի։

8. Աշակերտեալք պարտին պահել զանձինս և զհանդերձս իւրեանց յոյժ մաքուր՝ զի մի երևեսցին աղտեղութիւնք ի նոսա, և ոչ հանդերձք և կօշիկք նոցա բնաւ պատառոտեալ։ Հերք փոքրեալք և եղնգունք պարտին լինել յարդարեալք միշտ։

9. Աշակերտեալք պարտին մաքուր և անվնաս պահել զդասական պիտոյս իւրեանց և զգրեան, զորս ստացեալ են ի մատենադարանէ վասն ընթերցանութեան և յաւարտ ընթերցանութեան ընդ փոյթ վերադարձուցանելոց են ի մատենադարանն՝ ըստ առանձին կանոնացն որոյ։

Ծանօթութիւն. Ընդ մէն մի կորուսեալ կամ անպիտանացեալ գրենոյ և կամ այլ ուսումնական պիտոյից աշակերտեալք պարտին տուժել։

10. Զամենայն հարկաւոր հանդերձեղէնս և զայլ ուսումնական պիտոյս ստանան աշակերտեալք ի ձեմարանէ. ուստի և խստիւ արգելեալ է նոցա առանձին առ իւրեանս պահել հանդերձ, գլխարկ կամ գրեան և ի կիր արկանել զնոսա, առանց գիտութեան և թոյլտուութեան Տեսչի։

11. Առանց թոյլտուութեան Տեսչի

աշակերտելոց արգելեալ է նոյնպէս ագանել վերարկու և շրջել ի ձեմարանի, զոր ի կիր արկանելոց են միայն ի գնալն յեկեղեցի, ի սեղանատուն և ի ժամանակս հանդիսից։

12. Միայն ի կիւրակէ և ի տօն աւուրս թոյլատրի աշակերտելոց նամակագիրս լինել առ ծնողս, առ խնամակալս և առ ազգականս։

Ծանօթութիւն. Վասն առաքման նամակաց աշակերտելոց ի նամակատուն և ստանալոյ անտի կարգի առանձին ոք։

13. Ի տես և յայցելութիւն ծնողաց և բարեկամաց, միայն ի տօն և ի կիւրակէ աւուրս զկնի Ս. պատարագի թոյլատրի աշակերտելոց գնալ և մնալ առ նոսա մինչ ցերեկոյ առ այս սահմանեալ տոմսակաւ, ուսանողաց՝ ընդ միշտ, իսկ աշակերտաց՝ յամսոջ երկու անգամ։ Իսկ ի դարձին թէ ուսանողք և թէ աշա-

կերտք պարտին զտոմնակս իւրեանց ան-
կորուստ յանձնել հերթական վերակացուի
այնր աւուր։

Ծանօթութիւն.

Ա. Ի մեծի պահս և առ հասարակ ի
պահոց աւուրս արգելեալ է աշակերտելոց
այցելութեան աղագաւ գնալ առ ծնողս։

Բ. Ծնողք և աղգականք առ ի տանել-
ոյ ի տուն զաշակերտս պարտին ինքեանք
իսկ անձամբ հայցել հրաման և ինքեանք
իսկ ածել զնոսա ի տանէ ի ճեմարան։
Իսկ զուսանողս՝ առանց գիտութեան
ծնողաց մարթ է թողուլ ի տուն։

Գ. Աշակերտաց՝ որք իմերձակայ գիւ-
ղօրէից իցեն՝ արգելեալ է գնալ ի տե-
սութիւն ծնողաց կամ աղգականաց ա-
ռանց առանձին թոյլտուութեան Տեսչի։

Դ. Աշակերտելոց՝ որք արձակեալք են
ի տուն՝ խստիւ արգելեալ է միայնակ
շրջել ի փողոցի՝ ի շուկայս կամ այլուր։

առ ո եղեալ է երթ նոցա՝ պարտին ընդ
նոսա միայն զբօսնուլ։

Ե. Զառաջինն՝ զրկին աշակերտեալք ի
հետևեալ նուագի գնալ ի տուն՝ եթէ
յորոշեալ ժամանակի չեն վերադարձեալ
ի ճեմարան. իսկ ի կրկնելն՝ իսպառ զրկին
յայդպիսի իրաւանց։

Զ. Ի տեսութիւն աշակերտելոց ծնողք
և աղգականք ունին իրաւունս գալ ի ճե-
մարան միայն ի տօն աւուրս և խօսիլ
ընդ նոսա առանձին ի Տեսչէն ի յատ-
կացեալ սենեկի։ Ընդ այլում աշա-
կերտի խօսիլ առ վանդակաւ արգելեալ է
իսպառ։

14. Արգելեալ է աշակերտելոց կրել
ի մատին մատանի կամ զարդ ինչ՝ կամ
ի գործ արկանել ձեռնափայտ։

Ծանօթութիւն. Ուսանողաց միայն թոյ-
լատրի ի կիր արկանել ժամացոյց։

15. Զգրամս իւրեանց աշակերտեալք

պարտին աւանդել այնմ, զոր Նշանակէ Տեսուչն. որ ի ստանալն, թէ զորքանութիւն գումարին և թէ զանուն աւանդող անձին արձանագրելոց է ի Տեսչէն յանձնեալ տումարի և ի պահանջել հարկին մասն առ մասն տալոց է աւանդողաց։

16· Ի ձեռն ծառայից աշակերտեալք չունին բնաւ իրաւունս առանց գիտութեան վերակացուի գնել ի շուկայէ իր ինչ։ Արգելեալ է նոյնպէս տուր և առս առնել ընդ միմեանս։

17· Ընդ ձեռն Տեսչի միայն թոյլատրի աշակերտելոց տալ բերել մանկավարժական պարբերական հրատարակութիւնս։

18· Մէն մի ուսանող և աշակերտ պարտ է խղճի մտօք ուսանել զդաս իւր, վասն գրաւոր և բանաւոր աշխատութեանց իւրոց ի գործ արկանելով այնչափ ժամ՝ և ժամանակ՝ ցորչափ մարթ է ինքեան կանոնաւորապէս ուսանել զիւրն դաս և զհետ լինել գրաւոր աշխատութեանց։

19· Որք յառաջադէմքն են յուսմունս, պարտին օգնել թոյլ և անզօր դասընկերաց իւրեանց, ցուցանելով նոցա զդիւրին միջոցս յառաջադիմութեան և զեղանակ պատրաստելոյ զդասս։ Իսկ զգրաւոր աշխատութիւն ուսմամբ տկարացն այնոցիկ սրբագրել կամ զիւրն արտագրել տալ, արգելեալ է գլխովին։

20· Ի սկզբան և յետ աւարտման դասուց ասեն զաղօթս սահմանեալս, որոց պարտին աշակերտեալք երկիւղածութեամբ լսել յոտնկայս և ապա նստել կամ ելանել ի դասարանէ և ի լսարանէ։

Ծանօթութիւն. Առաջին աղօթք է «Ամենաբարի Աստուած», իսկ երկրորդն «Գոհանամք զքէն Արարիչ»։

21· Ի ժամ դասուց աշակերտեալք

պարտին նստել ուղիղ և անշեղ ի թիկանց կուսէ յենլով ի նստարանս։

22. Ի մտանելն ուսուցչի ի դասարան և ի լսարան աշակերտեալք կանգնին յոտին առանց աղմկի և հրամանաւ նորին նստին։

23. Որք չեն ուսեալ զդասս, նախ քան զսկզբնաւորութիւն դասուց յայտնել պարտին ուսուցչի, ծանուցանելով միանգամայն զառիթ զանցառութեան իւրեանց։

Ծանօթութիւն. Զդասս, զորս չէին ուսեալ, պարտին աշակերտեալք պատրաստել անթերի և համարս տալ միւս անգամ։

24. Ի ժամ դասուց աշակերտեալք պարտին լռութեամբ ուշադիր լինել ուսուցչի և պատասխանեաց ընկերի իւրեանց։ Տալ պատասխանի ի տեղի ընկերի կամ շփոթել զուսուցիչն աւելորդ բանիւք կամ հարցմամբք, արգելեալ է խստաւ։

Ծանօթութիւն. Ի ժամ դասու մտրթէ դիմել առ ուսուցիչն կարևոր հարցիւ՝ հրամանաւ նորին։

25. Որպէս ի պատմելն զդասս, այսպէս և ի դիմելն առ ուսուցիչն հարցիւ, աշակերտեալք պարտին յոտին կանգնել։

26. Եթէ չիցէ աւարտեալ դասն աշակերտեալք ոչ ունին բնաւ իրաւունս ելանելոյ ի դասարանէ և ի լսարանէ, բաց ի կարի և ի ստիպողական հարկէ, և այն ևս լինելոց է թոյլտուութեամբ ուսուցչին։

27. Աշակերտեալք պարտին ունել ի ձեռս իւրեանց տետրակ ինչ փոքրիկ յիշողութեան. որոյ յառաջնում երեսի գրեալ լինելոց է դասացուցակ շաբաթական հանդերձ համառօտ և ամփոփ բովանդակութեամբ իւրաքանչիւր դասուց։

28. Յետ աւարտման դասուց պարտին աշակերտեալք մնալ անշարժ ի տեղիս

իւրեանց, մինչև աւարտեսցէ ուսուցիչն զդաս իւր։ Յետ ելանելոյ ուսուցչին ի դասարանէ կամ ի լսարանէ, իւրաքանչիւր ոք ժողովելոց է զդասական պիտոյս իւր յարկեղ և ապա մեկնելոց է անտի։

Ծանօթութիւն. Աշակերտեալք ինքեանք իսկ պարտին հսկել ի վերայ դասական պիտոյից իւրեանց։

29. Յիւրաքանչիւր դասարանս և ի լսարանս որոշմամբ Տեսչի կարգին օրապահք։

30. Օրապահաց պարտք են հսկել մաքրութեան դասարանաց և լսարանաց. յանդանպակաս պահել ի դասարանի զկաւիճ և զսրբիչ, զգրիչ և զկաղամար ուսուցչական սեղանոյ, զքարտէզս և զպատկերս վերաբերեալս աւուրն դասուց։

Ծանօթութիւն. Զպակասութեանց ինչ ինչ իրաց պարտին օրապահք կանխաւ յայտնել հերթակալ վերակացուի։

31. Զկնի աւարտման դասուց յետ ելանելոյ աշակերտաց ի դասարանէ՝ օրապահք աչալրջութեամբ զննեն զմէն մի նստարան, և եթէ գտցեն ինչ անդէն մնացեալ՝ յանձնեսցեն ըստ պատկանելոյն։

32. Օրապահք ասեն զաղօթս սկսման դասուց և դասաւարտման։

33. Ի դասամիջոցի օրապահք տանին պահել զամենայն ուսումնական պիտոյս և հոգան զպիտոյից հետևեալ դասուց, զմաքրութենէ և զօգափոխութենէ դասարանաց և լսարանաց։

34. Յաշակերտելոց, եթէ տկարանայցէ ոք, պարտի դիմել անմիջապէս առ հերթակալ վերակացուն. յորմէ և ստանալով տոմսակ՝ գնայ ի հիւանդանոց, և յանձնելով զայն հիւանդապահին՝ մնայ անդ մինչ ցապաքինումն։

35. Յետ առողջանալոյ հիւանդին՝ բժիշկն տայ հրաման ելանելոյ ի հիւան-

գանոցէ առանձին տոմսակաւ։ Զայս տոմ-
սակ պարտէ առողջացեալն յանձնել հեր-
թական վերակացուին և ստանալ ի նմանէ
իրաւունս վասն մտանելոյ ի դասարան
կամ ի լսարան։

Ծանօթութիւն. Առանց թոյլտուութեան
հերթական վերակացուի առողջքն ոչ ու-
նին իրաւունս մտանելոյ ի հիւանդանոց
և տեսակցելոյ ընդ հիւանդ ընկերս իւ-
րեանց, եթէ ոչ ունիցին ի ձեռին զտոմ-
սակ հերթական վերակացուի։

36. Կարգ օրական պարապմանց և բա-
ժանումն ժամանակի լինելոց է այսպէս.

Ա. Գիշերապահք հարկանեն զզանգակ
ի 5½ ժամու առաւօտեան. ի հնչել զան-
գակի աշակերտեալք պարտին առանց
յապաղանաց զարթնուլ և յառնել ի
տեղւոջէ, լռութեամբ և պարկեշտու-
թեամբ զգենուլ զհանդերձս, լուանալ
զերեսս և յարդարել զանկողինս իւրեանց։

Բ. Ի 6 րորդ ժամու ի ձայն զանգակի
ժողովել պարտին աշակերտեալք ի ներ-
քին սրահ ճեմարանի զառաջեաւ ունելով
զերգիչս. ապա զոյգ զոյգ ելանեն ի վե-
րին սրահ ճեմարանի առաջնորդութեամբ
վերակացուաց, ուր և ամենեքին՝ զերեսս
իւրեանց ուղղեալ ընդ արևելս՝ պատկա-
ռանօք և երկիւղածութեամբ ասեն զայս
աղօթս առաւօտու։

Հայր մեր որ յերկինս . . .
Տէր եթէ զշրթունս . . .
Լոյս արարիչ լուսոյ (աձ. բձ. գձ.
դձ. յաւուրս)
Անեղանելիդ Աստուած (ակ. բկ.
գկ. դկ. յաւուրս)
Զառաւօտու աղօթս . . .
Օրհնեսցուք զՏէր յամենայն ժամ

Գ. Յետ առաւօտեան աղօթից կար-

գաւ և լռութեամբ իջանեն ի սեղանատուն և ըմպեն զթէյ։

Ծանօթութիւն. Թէյն պատրաստի յառանձին սենեկի և մատակարարի աշակերտելոց ի ձեռն օրապահ մատակարարաց, զորս ցուցակաւ կարգէ Տեսուչն։ Ամէն մի աշակերտ պարտի ըմպել բաժակ մի և եթ։

Դ. Ի սեղանատանէ նախ կարգաւ ելանեն ուսանողք և գնան ուղղակի ի լսարանս իւրեանց առ ի կատարելոյ զսերտողութիւն. յետ նոցա գնան և աշակերտք ի սերտարանս, որք և դաս առ դաս բաղմելով յիւրեանց տեղւոջ կատարեն նոյնպէս զսերտողութիւն, որ տեւելոց է մինչև 37 ½ ժամ։

Ե. Ի ձայն զանգակի աւարտի սերտողութիւնն, և իւրաքանչիւր օր պարտի ընդ իւր առնուլ ղդասական պիտոյս իւր և զգրեան վերաբերեալս առաջին երից

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
R.S.F.S.R. Публичная Б
7/XI-1922
ՄԱՍԱՅԻՆ ԱՆՀԱՏ
1004

դասուց աւուրն և գալ մատակարարան և զետեղել զայնպէս և գնալ ի պարտէզ վասն զբօսնելոյ, եթէ օդն չէ խառնակ։

Զ. Ց 8-րորդ ժամէ պակաս 5 րոպէիւ ի ձայն զանգակի առանց աղմկի և շփոթութեան ժողովելոց են ամենեքին ի դասարանս և ի լսարանս, ուր և լռութեամբ սպասելոց են գալստեան ուսուցչի։

Ծանօթութիւն. Ի բացակայութեան ուսուցչի աշակերտեալք դարձեալ մնալոց են ի դասարանս և ի լսարանս իւրեանց, և լռութեամբ և հանդարտութեամբ պարտին աշխատել կամ գրութեամբ և կամ ընթերցանութեամբ։

Է. Տևողութիւն առաջին դասուն լինելոց է յ8 ժամէ մինչ ց8 ժ. 55 ր. վասն հանգստեան՝ 10 րոպէ. յ9-րորդ ժամու և ի 5 րորդ րոպէի սկսանի դասն երկրորդ։

Ը. Տեղուութիւն երկրորդ դասուն լի-
նելոց է ց10 ժամ. Հանգիստն 10 րոպէ.
ի 10 որդ ժամու և ի 10-որդ րոպէի
սկսանի երրորդ դասն, որ տեւելոց է
ց 11 ժամ և ց 5 րոպէ։

Թ. Ցետ աւարտման երրորդ դասու
աշակերտեալք պարտին ժողովել զդա-
սական պիտոյս իւրեանց և զգրեան և
տանել ի սերտարան և զետեղել յարկեղս.
յետ այնորիկ ամենեքին ագանելով զվե-
բարկու և զգլխարկ՝ եթէ օրն խոնաւ իցէ
և տիղմ՝ և զկրկնակօշիկ՝ ի ձայն զանգա-
կի առաջնորդութեամբ հերթակալ վերա-
կացուաց ի 11 ժամու ի 15 րոպէի կար-
գաւ գնան ի սեղանատուն և ուտեն զճաշ։

Ծանօթութիւն Ի ժամ ճաշու ոմանք ի
մեծագունից աշակերտելոց կարգադրու-
թեամբ Տեսչի հերթակալական կարգաւ
ի լուր ամենեցուն ընթեռնուն ճառ։

Ժ Ցետ ճաշու ազատք են աշակերտք

ց1 ժամ և ց45 ր. ուստի և կարեն
զբօսնուլ և խաղալ կամ ի պարտիզի
և կամ ի դաւթի, եթէ եղանակն չէ
խառնակ. իսկ ի խառնակ աւուրս պարտին
մնալ ի ներքին սրահի և ըստ կամեցողու-
թեան մտանել ի սերտարան և ի լսարան,
միայն թէ աշխատիցեն լռութեամբ։

ԺԱ. Ցառաջնում ժամու ի 45 րոպէի
ի հնչել զանգակի աշակերտք ընդ փոյթ
մտանեն ի սերտարան, առնուն ընդ ին-
քեանս զդասական պիտոյս և զգրեան
վերաբերեալս վերջին երկուց դասուց և
ապա իջանեն ի դասարանս։

ԺԲ. Ցերկրորդում ժամու սկսանի դասն
չորրորդ, որ տեւելոց է ց2-րդ ժամ և
ց55 րոպէ. Հանգիստն 10 րոպէ։ Ցեր-
րորդում ժամու ի 5 րոպէի սկսանի դասն
հինգերորդ, որ լրանայ ի 4-որդ ժամու։

ԺԳ. Ցետ աւարտման դասուցն աշա-
կերտք դարձեալ առնելով ընդ իւրեանս

զդասական պիտոյս և զգրեան տանին ի սերտարան և ապա գան և զբօսնուն մինչ ց 5-րորդ ժամ։

Ծանօթութիւն. Ի 4-րորդ ժամու և ի 15 րոպէի Հարկանի զանգակ և հերթակալք պարտին գնալ յեկեղեցի։

ԺԴ. Ի 5-երորդ ժամու Հարկանի զանգակ, աշակերտեալք գնան ի սեղանատուն վասն ընթրելոյ նովին կարգաւ, որպէս ի ժամ ճաշու։

ԺԵ. Ցետ ընթրեացն լինի Հանգիստ մինչեւ ց 7-րորդ ժամ, իսկ յ 7-րորդ ժամէ ց 9-րորդ ժամ լինելոց է սերտողութիւն։

Ծանօթութիւն. Ի ժամ Հանգստեան երեկոյի արգելեալէ աշակերտելոց զբօսնուլ ի պարտիզի։

ԺԶ. յ 9-րորդ ժամու յ 30 րոպէի ի հնչել զանգակի աշակերտեալք գան կատարել զաղօթս երեկոյին, որ է՝

ՀԱՅԿ Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
С.С.Р.Հ.
7/XI-1922
Имени А. Мясникяна
Ա. ՄԱՍՆԻ Ի ՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հայր մեր . . .
Զ.Հանգստեան զաղօթս . . .
Փառք քեզ Տէր Աստուած մեր . . .
Հրեշտակ զուարթուն . . .
Ողորմութիւն քո Տէր, զՀետ մեր . .

ԺԷ. Ցետ աղօթիցն աշակերտեալք կարգաւ և լռութեամբ գնան ի ննջարան և պարկեշտութեամբ մերկանան զՀանդերձս և ի քուն լինին։

Ծանօթութիւն. Այս կարգ բաժանման ժամանակի սուղ ինչ զանազանութեամբ անխախտ պահի ի տօն և ի կիւրակէ աւուրս. զի յաւուրս յայսոսիկ՝ Ա. պարտին աշակերտեալք քան զսովորականն կարգ յառնել վաղքաջ և գնալ յեկեղեցի, Բ. ի նախընթաց և ի նմին երեկոյի ժամ մի առաջ գնան ննջել և Գ. ի նախընթաց երեկոյի չիք սերտողութիւն։

20532

2018

<< Ազգային գրադարան

NL0055591